


# ԱՒԱԳ ՇԱԲԹՈՒԱՆ ՏԵՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՒԱՆԴՈՒԴԵՆԷՆ ՆԵՐՍ

Քրիստոնեական եկեղեցւոյ վաղ շրջանէն ի վեր, աշխարհի լոկու պատմութեան կատարելագործիչ ժամանակակետ՝ Յիսուս Քրիստոսի յարութեան տօնախմբութիւնները, մեծ տեղ գրաւած են ուղղափար հաւատացեալներուն հաւատքի կեանքի ու ծիսական ակնդրութենէն ներս: Աննելով սոյն յարութեան օրուան անցուդարձերուն շաբաթական յիշատակը եւ «Կիրակի» (այսինքն՝ Տիրոջ) օրուան սուրբ Պատարագի շուրջ հաւաքը որպէս սկզբնակետ, մինչեւ 4րդ դարուն վերջը հետզհետէ աճեցաւ նաեւ տարեկան տօնակատարութիւն, որ կը յիշատակէր Քրիստոսի երկրաւոր կեանքի առնչուած վերջին շաբաթուայ պատկանող բոլոր պատահածները: Այժմ կը ներկայացուի Աւագ Շաբաթուայ յայժմեական տօնախմբութեան ձեւի կարճ ամփոփում մը:

## ՅԻՇԱՏԱԿ ՂԱԶԱՐՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Սուրբ Յովնանու Աւետարանը կը յիշէ թէ. «Չատիկէն վեց օր առաջ», Յիսուս մահէն վերակենդանացուց իր ընկեր Ղազարոսը, որպէսզի Աստուծոյ անհուն փառքն ու մարդկութեան



հանդէպ անսպար գթութիւնը յայտնուին: Սուրբ Եկեղեցին զայն կը մեկնաբանէ որպէս Քրիստոսի յարութեան ու ամբողջ տիեզերքի սրբացման ու նորոգման նախապատկերացում:

## ԾԱՂԿԱԶԱՐԻ

Ուղղափար հաւատացեալներուն կողմէ որպէս «Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի Յաղթական Մուտքն Երուսաղէմ» նշանակուած «Օաղկազարդ»ը (այսինքն՝ ծաղիկով զարդարուած) Հայ ժողովուրդի մօտ, մտերմիկ ու սիրուած տօն մըն է: Սոյն օրը կը տօնախմբենք ոչ թէ յաղթական, երկնաւոր թագաւորի մը Երուսաղէմ քաղաքին մուտքը (ահա թէ ինչո՞ւ ժողովուրդի այն նոյն ամփոփը որ ողջունեց իր մուտքը, ահաւասիկ քանի օր ետք միայն պիտի պահանջէր իր խաչելութիւնը), այլ՝ երկնաւոր մեր թագաւորին ու փեսային, որ եկած էր հրաւիրելու բոլոր հաւատացեալները երկնաւոր իր հարսնարանին: Յետ սուրբ եւ անմահ Պատարագին, որուն ընթացքին հաւատացեալները արմաւենի ոստեր կը կրեն, «Դռնբացեք»ի Կարգը կը կատարուի, որ խորհրդաբար կը նախապատկերացնէ մեր ուրախալից մուտքը Աստուծոյ արքայութեան, որուն հրաւիրուած են Յիսուս Քրիստոսի բոլոր հաւատացեալները:



## ԱՒԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Աւագ Շաբաթուամէն մէկ օր կը յիշատակէ սուրբ Աւետարանի մէջ արձանագորուած Քրիստոսի վերջին օրերուն վերաբերեալ պատահար մը: Աւագ Երկուշաբթին



կը յիշատակէ ճամբուն եզերքի արմաւենիծառին չորացումը (Մատթ. 21:18-22). իսկ Աւագ Չորեքշաբթին՝ Սիմոնի տան մէջ Յիսուսի օծումը (Մատթ. 26:6-13): Բայց, թերեւս ամենէն գեղեցիկ ու ազդեցիկ Հայաստանեայց եկեղեցւոյ ակնդրութիւնը եղած է Աւագ Երեքշաբթիի յիշատակը՝ Յիսուս Քրիստոսի արտասանած «Տասն Կուսանաց» առակին, որ պատմեց Երուսաղէմի կործանման ու ներկայ աշխարհիս վախճանման իր խօսած ճառով (Մատթ. 25): Ատոր մէջ, Յիսուս երկնաւոր արքայութիւնը կը նմանցնէ տասը կոյսերու, որոնք յարգարուած ու իւղով լեցուն լապտերներով կը սպասէն փեսայի ժամանումին, եւ որոնցմէ հինգը իմաստուն են եւ հինգը՝ յիմար: Իմաստուն կոյսերը յաւելեալ իւղ բերին հարսանիքին, հաշիւ ընելով թէ փեսան կրնար ուշանալ: Բայց յիմար կոյսերը զայն չբերին, եւ մինչ դուրս ելած էին յաւելեալ իւղ գնելու համար, փեսան ժամանեց եւ հինգ իմաստուն կոյսերը իր հետը տարաւ մտցուց հարսանիքի սրահը: Այսօր, երեկոյեան ժամերգութեան ընթացքին, տասը պատանի աղջիկներ, վառած մոմ իրենց ձեռքը կը պատկերացնեն Ս. Եկեղեցին որպէս իմաստուն ու պատրաստ կոյսերը, մինչ հաւատացեալները մտիկ կ'ընեն սուրբ Գրային այն հատուածին, որուն մէջ կը բացատրուի Աստուծոյ ծրագիրը

Նորոգուած ու սրբացուած աշխարհի մը հաստատման ու ներկայ չար աշխարհիս ոչնչացման:

## ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Աւագ Հինգշաբթին շատ հաւանաբար Քրիստոնեական եկեղեցւոյ ամենէն նշանաւոր օրն է, թերեւս Սուրբ Չատիկէն կամ Ծընունդէն իսկ աւելի, գոնէ ծիսական առումով նկատուած: Յամենայն դէպս,




տարուան արարողական երկարագոյն ու ծանրագոյն օրն է, օր մը՝ որ դարերու ընթացքին մնացած է Հայ ժողովուրդին սրտի հարազատ, ու նոյնիսկ որուն մինչեւ չորրորդ դարու վերջաւորութեան հաւատացեալները արդէն իսկ մեծ խանդավառութեամբ կ'անըկալէին: Աւագ Հինգշաբթին կը յիշատակէ մեր Տիրոջ վերջին Ընթրիքը, մատնութիւնն ու չարչարանքները: «Վերջին Ընթրեաց» սուրբ Պատարագի կեդրոնական տեղ կը գրաւէ Աւագ Հինգշաբթի օրուան: Ատոր համար, պատմականօրէն եղաւ նաեւ այն օրը եոբ ապաշնարհիողները (անոնք որոնք լուրջ մեղքի մը հետեւանքով գրկուած էին Ս. Հաղորդութեան խորհուրդէն) պաշտօնապէս վերստին կ'ընդունուէին սուրբ եկեղեցւոյ հովանիին ներքեւ: Ասիկա հետզհետէ ընդլայնեցաւ բոլոր հաւատացեալներու, ու ասկէ աճեցաւ «Կարգ Ապաշխարհողաց» անունով յատուկ արարողութիւն մը, որ մինչեւ այսօր առաւօտեան կը կատարուի: Ս. Պատարագէն ետք կը հետեւի «Կարգ Ոտնլուայի» արարողութիւնը, որուն ընթացքին 12 պատանի տղամարդիկ

գեղեցկօրէն կը պատկերացնեն Ս. Առաքեալները, մինչ պատարագիչ քահանան՝ Քրիստոս ինք, իր շուրջառը հանելով եւ խոնարհութեամբ ու ծառայաբար իրենց ոտքը լուարով: Ասով հանդերձ, նաեւ կ'օրհնուի եւ կը գործածուի ձեռքը, որմէ հաւատացեալները սոյն ձեռքէն մէկ բաժին ստանալով կը տանին տուն ու կը գործածեն: Անտարակոյս, Հայաստանեայց Եկեղեցւոյ ամենէն շատ հոգեհունչ ու ներշնչող արարողութիւններէն է Աւագ ծոբաթ օրուան կանխող «Կարգ Խաւարմ ան» արարողութիւնը, որուն ընթացքին հսկում կը կատարենք սուրբ Առաքեալն երուն կողքին, որոնք իրենք նաեւ հսկեցին մինչ Յիսուս Գեղսեմանի Պարտեզին մէջ կ'աղօթէր: Ս. Խորանին վրայ գետնդուած տասը վառած մոմեր զանոնք կը պատկերացնեն: Արարողութեան հսկման բաժնին, վեց հատ Աւետարանի ընթերցումն եր կը կատարուին, զարդարուած սաղմոսներով ու հոգեւոր երգերով: Ամէն մէկ ընթերցումի վերջաւորութեան երկու երկու կը մարին մոմերը, մինչեւ որ ամբողջ եկեղեցին մութ խաւարի մէջ կը մնայ: Այս հանգրուանին կ'երգուի Քրիստոսի չարչարանքներու մասին գեղեցիկ ու յուզիչ տաղ մը՝ «Ո՛ր ես, Մայր Իմ» անունով: Աւանդաբար, իրաքանցիւր ընթերցումի ընթացքին, հաւատացեալները դերձանի մը վրայ մէկ կամ երկու կապ կը կապեն, յետոյ կապելու համար իրենց դաստակի կամ մաճակալի նեցուկի շուրջ, ու այսպէս պահելով սուրբ Աւետարանի օրհնութիւնը մինչեւ Քրիստոսի Համբարձման տօնին: Խաւարման արարողութեան աւարտին, սուրբ Խաչի երկըրպագութիւն կը կատարուի ծնրադիր: Անցեալին նայելով, Հայերը ընդհանրապէս մեծ թիւով միջտ գտնուած են Խաւարման գիշերին, «որքան

երկար ու որքան ոյճ՝ այդքան լաւ» մտաայնութեամբ: Իրաւ, կարեւոր այս հսկումը աշխարհի մէջ զանազան տեղեր շատ երկայն կը տեւէ, երկարելով գիշերուայ մութ ժամերուն, գործնական ըլլալու նպատակով կըրծատուած կը կատարուի: Այնուամենայնիւ, ոեւէ մէկը պէտք չէ ինքզինք զրկէ շինիչ այս արարողութենէ:

**ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ**

Աւագ ուրբաթ կը յիշատակէ մեր Տիրոջ խաչելութիւնն ու թաղումը: Յետմիջօրէին, կը կատարուի «Կարգ Խաչելութեան» արարողութիւն, որ կը բաղկանայ սաղմոսներէն, հոգեւոր երգերէն ու ընթերցումն երէն, որոնք կը պատմեն Քրիստոսի վերջին ժամերու եւ վերջին խօսքերուն մասին: սուրբ Խաչի երկրպագութիւնը դարձեալ կը կատարուի, բայց այս անգամ՝ յոտնկայս, որովհետեւ ծիսականօրէն Աւագ ուրբաթ օր ցերեկ ատեն ծունկի գալու հրաման չկայ: Երեկոյեան, «Կարգ Թաղման» արարողութիւնն ալ կը կատարուի, որ դարձեալ Հայ ժողովուրդին մտերմիկ դարձած է: Հոս գերեզման մը ու կը զարդարուի մոմերով եւ ծաղիկներով, որոնք մարդիկ կ'ընծայեն խաչեցեալ Տիրոջ: սուրբ Խաչի երկըրպագութիւնը անգամ մը եւս կը կատարուի ծնկաչոյց: Արարողութեան աւարտին, հաւատացեալ կը մօտենան գերեզմանին ու զայն պատուելով ատոր վրայէն ծաղիկ կը քաղեն:



**ԱՎԱԳ ՇԱԲԱԹ ՕՐ**

Աւագ Շաբաթ երեկոյեան, Ս. Ճըրագալոյցը կը սկսի արեւնամուտին, որն է սկիզբը սուրբ Չատիկի տօնին: Ասոր ընթացքին 12 հատ սուրբ Գրային ընթերցումներ կը կատարուին: Կ'ունկնդրեն հաւատացեալները Մարգարեական այն խօսքերը որոնք նախագուշակումներն են Քրիստոսի հրաշագարդ յարութեան: Ասոնց շարքին ի միջի այլոց կը գտնուին՝ Խորայելի ժողովուրդի Կարմիր Օճվու մէջէն անվնաս անցումը, Եղիա մարգարեի հրեղէն կառքով երկինք յափըջտ ակուիլը, Յովնան մարգարեի պատմութիւնը եւ երեք մանուկներու բորբոգուած հնոցէն ազատումը: Բոլորն ալ կը նախապատկերացնեն մարդկութեան փրկութիւնը եւ մահու եւ դժոխքի վրայ այն յաղթանակը որ Քրիստոսի սուրբ Յարութիւնը իրագործեց: Սոյն ընթերցումները անմիջապէս կը յառաջացնեն Ճրագալոյցի Ս. Պատարագը, որուն ընթացքին առաջին անգամ ըլլալով կը լսենք այն երանաւետ ու կենսատու խօսքի հոչակումը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» կամ «Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է»:




**ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ**

Ամբողջ աշխարհը այսօր դրողայ, ձայնակցելով միասին՝ «Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է»: Հաւատացեալները սուրբ Պատարագի պահուն կը հաւաքուին եկեղեցի, ուրախութեամբ սփռելուհամար մեծ աւետիսը: սուրբ Պատարագէն ետք նաեւ սովորաբար հակիթով խրախճանք կ'ընեն, եւ սուրբ. Չատիկի յատուկ Աւագ Հինգշաբթի գիշերուայ օրհնուած կարագով պատրաստու ած «չորեկ» կ'ուտեն: Սուրբ Չատիկի տօնախմբութիւնը 40 օր կը շարունակուի ու այդ լոյսին տակ այս շրջանին ժողովուրդը պէտք է եկեղեցի յաճախէ:



**ՍԲ. ԶԱՏԻԿԻ ԶՐԴ ՕՐ - ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ**

Ինչպէս է պարագան Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր տաղավառ տօներուն, Ս. Չատիկի երկուշաբթի օրը նշանակուած «Մեռելոց Յիշատակի»ի: Աւանդաբար, այս մէկը կը կատարուի Ս. Պատարագի եւ Հոգեհանգըստեան պաշտօնի մատուցմամբ եւ գերեզմանօրհնելով:



*Հեղինակը՝  
Տ. Ստեփանն Քնյ. Պալճեան  
Նորթ Եստովր, Մետէչիանց - 2015*